ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» հոկտեմբեր 2018 թվականի № 90-Ա

«ՆԱԻՐԻ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 56-րդ հոդվածի 1-ին մասով 57-րդ հոդվածով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով՝ հանքավայրի փոփոխված արդյունահանման նախագծի 2018 թվականի հունիսի 18-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» ԲՓ 58 պետական փորձաքննական դրական եզրակացությունը, հաշվի առնելով «Նաիրի» ՍՊ ընկերության 2018 թվականի ապրիլի 13-ի թիվ 11 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

Հրամայում եմ

1. «Նաիրի» ՍՊ ընկերության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 5Բ և թիվ 6Բ հորատանցքերից արդյունահանման՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՇԱԹՎ-29/359 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- գործողության ժամկետը երկարաձգել 50 տարով՝ սահմանելով այն մինչև 2069 թվականի ապրիլի 15-ը.
- հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 157753 մ^3 ածխաթթվային հանքային ջուր 828200 մ^3 ածխաթթու գազի կորզման նպատակով, այդ թվում՝ հորատանցք թիվ 5Բ՝ 15768 մ^3 ածխաթթվային հանքային ջուր 89878 մ^3 ածխաթթու գազի կորզման նպատակով, հորատանցք թիվ 6Բ՝ 141985 մ^3 ածխաթթվային հանքային ջուր 738322 մ^3 ածխաթթու գազի կորզման նպատակով:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-359 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից հետո եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ